

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2021 թ. նոյեմբերի 18-ին կայացած թիվ 4 նիստի**

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին մասնակցել են 23-ը:

Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը:

Օրակարգում ներկայացված էր դեկանի տարեկան հաշվետվության հարցը, հետևաբար առաջարկվեց առաջադրել նախագահողի թեկնածություն: Գիտական խորհրդի անդամների կողմից առաջադրվեց դեկանի տեղակալ, կ.գ.թ. Կ.Ա. Ղազարյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև նախագահողը քվեարկության դրեց օրակարգը, ինչը միաձայն հաստատվեց:

**Օրակարգ՝**

1. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկուցող՝ դեկան Է.Ս. Գևորգյան):

2. Ընթացիկ հարցեր:

- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի կողմից առաջարկված «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի հայտի քննարկման հարցը:
- ԵՊՀ-ի էրազմուս+ ABioNet “Armenian Network of Excellence in Bio-products Science and Technology” 2017-2020 ծրագրի շրջանակներում Հ.Խ. Գևորգյանի, Կ.Ա. Թոչունյանի «FERMENTATION» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը:

ԼՍԵՑԻՆ. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (01.01.2021թ –31.12.2021թ) ֆակուլտետում կատարած աշխատանքների վերաբերյալ: Իր խոսքում Է.Ս. Գևորգյանը մանրամասնորեն ներկայացրեց ընդհանուր տեղեկություններ կենսաբանության ֆակուլտետի վերաբերյալ, ամբիոններում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին, անրադարձավ հրատարակված գիտական աշխատանքներին և այլն:

Ստորև ներկայացվում է Է.Ս. Գևորգյանի հաշվետվությունը:

ԵՂՀ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(01.01.2021թ – 31.12.2021թ)

Հարգելի գործընկերներ.

1. Ընդհանուր տեղեկություններ ֆակուլտետի վերաբերյալ

Սկսեմ նշելով ֆակուլտետի սովորողների ընդհանուր թվաքանակը: Ներկայումս՝ 2021/22թթ ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետն ունի 503 սովորող /481 ուսանող և 22 ասպիրանտ/: Այդ թվում՝ առկա համակարգի բակալավրիատում՝ 296, մագիստրատուրայում՝ 120, հեռակա համակարգի բակալավրիատում 65 ուսանող, իսկ առկա և հեռակա ասպիրանտուրայում՝ համապատասխանաբար 6 և 16 ասպիրանտներ (պատկեր 1): Համեմատելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշների հետ տեսնում ենք, որ նվազումը մեծ չէ /20/, իսկ համեմատելով միայն ուսանողների թվաքանակը վերջին երեք տարիներին /2018/19թթ ուստարում՝ 471, 2019/20 ուստարում՝ 469, 2020/21 ուստարում՝ 504/ , համոզվում ենք, որ վերջին տարիներին ֆակուլտետում սովորողների թվաքանակի փոփոխությունները չնչին են, այսինքն այս տարի էլ ֆակուլտետի ուսանողների թվաքանակը, կարծում եմ, մոտ է իր օպտիմալին /500-550 սովորող/ (պատկեր 2):

2. Ուսումնական աշխատանքներ

Նմանատիպ հաշվետվություններում միշտ նշել եմ /և դա իրողություն է եղել/, որ ֆակուլտետի ուսումնական գործընթացները հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով, առանց արտակարգ միջադեպերի: Ցավոք, արդեն երկրորդ տարին է, որ պիտի արձանագրեմ, որ հաշվետու տարում ուսումնական գործընթացներն ընթացել են ոչ բնականոն հունով՝ առկա կամ հեռավար կամ էլ դրանց զուգակցմամբ՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակի ելևեջներով: Միակ սփոփանքն այն կարելի է համարել, որ հաշվետու տարում ուսումնական աշխատանքներն, ավելի արդյունավետ են ընթացել, քան անցյալ տարի, ինչը թե համալսարանի ղեկավարության և թե մեր դասախոսական անձնակազմի և ուսանողության այս բարդ ժամանակաշրջանում ձեռք բերած փորձի հետևանքն է: Բոլոր առաջացող դժվարությունները, որոնք ուսման պրոցեսում, կիսամյակի ընթացքում, «of line»-ից դեպի «on line» կամ հակառակ ուղղությամբ փոփոխությունների արդյունքն էին, թե դասախոսներից և թե ուսանողներից պահանջում էին արագ կողմնորոշում և ուժերի գերլարում: Այս հարցում նրանց հիմնական օժանդակություն ցուցաբերում էին, հատկապես, մեր ղեկանատի պարտաճանաչ աշխատակիցները, Մարջան Գևորգյանը և Ռուզան Յորդանջյանը՝

դեկանի տեղակալ, գիտությունների նորընծա դոկտոր Կարեն Ղազարյանի գլխավորությամբ: Առաջ անցնելով ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել նրանց, ովքեր թերևս ֆակուլտետում ուսումնական գործընթացների հնարավորինս բնականոն ընթացքի ապահովման հիմնական պատասխանատուներն ու իրականացնողներն են:

Ընթանում է համավարակի երրորդ ուսումնական տարին և բնական է, որ, ընդհանուր առմամբ, կարողանում ենք ադապտացվել այս ոչ նորմալ վիճակին:

Իհարկե, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունն այն չէ, ինչ նորմալ ժամանակաշրջանում էր, բայց ֆակուլտետի դեկանատի կողմից արվում է ամեն հնարավորը այս դժվար պայմաններում գիտակրթական գործընթացների հնարավորինս բարեհաջող իրականացման համար: Հասկանալի է, որ հեռավար ուսուցման և համաճարակի պայմաններում հնարավոր չէ ակնկալել ուսումնական աշխատանքների պատշաճ արդյունավետություն: Նման անսովոր պայմաններում յուրաքանչյուրից, լինի դա դասախոս, թե ուսանող, պահանջվում է առավելագույն պատասխանատվություն, ինչը տարբեր դրսևորումներ է ունենում տարբեր անհատների մոտ: Այստեղից էլ մեր որոշ դասընթացների թերակատարումը հատկապես անցյալ կիսամյակում, որտեղ իհարկե կային նաև օբյեկտիվ պատճառներ:

Ուսումնական գործընթացներում ստեղծված նման «արտակարգ իրավիճակը» չէր կարող ազդեցություն չունենալ ուսանողների իրական առաջադիմության վրա: Նշում եմ իրական, քանի որ ստեղծված իրավիճակում դասախոսական անձնակազմի չափից ավելի բարյացակամ վերաբերմունքը, բարձր գնահատականների շոայլումը հասան անընդունելի սահմանների: Հաջորդ պատկերում (պատկեր 3) բերված է ֆակուլտետի երեք բաժիններում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների առաջադիմության արդյունքները:

Բակալավրիատի ուսանողության 5,7%-ը (17 ուսանող) սովորել է գերազանց գնահատականներով, ընդ որում նրանց թիվը տարբեր է երեք բաժիններում (6 ուսանող, 3,9%՝ կենսաբանության բաժնում; 11 ուսանող, 9,6%՝ կենսաքիմիայի բաժնում, իսկ կենսաֆիզիկայի բաժնում գերազանցիկ չի եղել): Ինչպես տեսնում ենք, առջևում կենսաքիմիայի բաժնի ուսանողներն են. նրանք առջևում են նաև հեռացված ուսանողների քանակով /3 հեռացվածներից 2-ը/: Եթե բակալավրիատի ուսանողների առաջադիմության այս ցուցանիշները տրամաբանորեն ընդունելի են, ապա նույնը չի կարելի ասել մագիստրատուրայի ուսանողության համար: Այսպես, 135 մագիստրանտներից 66-ը (!) գերազանցիկներ են /49%/, ընդ որում գերակշռում են 20 գնահատականները: Գերազանցիկների թիվը չափից ավելի է կենսաբանության

բաժնում /55 ուսանող/, իսկ կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի բաժիններում՝ համապատասխանաբար 8 և 3 ուսանող: Բերված թվերը, կարծեք թե, վկայում են համապատասխան ամբիոնների անձնակազմերի գիտակրթական դրական գործունեության մասին, սակայն համաձայնեք, որ մագիստրանտների կեսից ավելի գերազանցիկների առկայությունը իրատեսական չէ և վկայում է դասախոսների չափից ավելի լիբերալ վերաբերմունքի մասին: Կարծում եմ, որ հատկապես ներկա պայմաններում, կրթական գործընթացի արդյունավետության խիստ նվազման դեպքում բարձր գնահատականների շոայլումն անհանդուրժելի է: Հեռակա ուսուցման համակարգում ևս վիճակը նորմալ չէ՝ 56-ից՝ ոչ մի գերազանց ուսանող: Ընդհանուր անսահման բարյացակամության այս պայմաններում հաշվետու տարում ֆակուլտետից, տարբեր պատճառներով, հեռացվել է 4 ուսանող, բոլորն էլ առկա համակարգից, անցյալ տարվա 19-ի դիմաց:

Ուսանողների գիտակրթական գործունեության ապահովման գործին այս ուսումնական տարում լծված է ֆակուլտետի ողջ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը: Այդ թվում՝ 1 ակադեմիկոս՝ ՀՀ ԳԱԱ-ից հրավիրված, ֆակուլտետում աշխատող 2 թղթակից անդամներ, գիտությունների 10 դոկտոր և ավելի քան 90 թեկնածուներ: Ցավոք, համաճարակային արհավիրքը շոշափելի հարված հասցրեց մեզ այս առումով ևս. ուղիղ մեկ տարի առաջ, 2020թվականի նոյեմբերի 18-ին մեզնից հեռացավ ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, խոշոր գիտնական և գիտակրթական գործընթացների փայլուն կազմակերպիչ պրոֆեսոր Արմեն Թոչունյանը, իսկ ս.թ. օգոստոսի 31-ին՝ կենդանաբանության ամբիոնի նախկին վարիչ, կենդանաբանության գիտական լաբորատորիայի ղեկավար, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆելիքս Դանիելյանը: Բարձր գնահատելով նրանց անձնուրաց գործունեությունը և երախտապարտ լինելով նրանց, ուրախությամբ ուզում եմ նշել, որ ֆակուլտետի բոլոր ամբիոններում շատ են նրանց նվիրական գործունեությունը շարունակողները, ընդ որում ինչպես միջին, այնպես էլ երիտասարդ տարիքի մեր գործընկերների շրջանում: Ասվածի մասին է վկայում այն, որ հաշվետու տարում մեր գործընկերներից երկուսը՝ /Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Աննա Փոլադյանը և ֆակուլտետի ղեկանի տեղակալ, դոցենտ Կարեն Ղազարյանը պաշտպանեցին դոկտորական ատենախոսություններ, իսկ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ Մարինա Փարսադանյանը պաշտպանելու է նայեմբերի 30-ին: Հաշվետու տարում ֆակուլտետի երկու ամբիոնների երիտասարդ աշխատակիցներ պաշտպանեցին թեկնածուական ատենախոսություններ: Ուրախալի է նաև այն, որ այս պատկառելի գիտակրթական հանրույթը ներկայացված է ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներում՝ 7

ամբիոններում, ֆակուլտետում գործող «Կենսաբանության» ինստիտուտի 9 լաբորատորիաներում և 2 գիտակրթական կենտրոններում՝ «Կիրառական կենսաբանության» գերազանցության կենտրոնում և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի» նորարարական կենտրոնում:

Գիտակրթական գործունեության բարելավմանը նպաստում է նաև միջամբիոնային, միջֆակուլտետային նոր հնչեղություն ունեցող մասնագիտացումների բացումը: Ցավոք, այդպիսիք դեռևս չունենք, բայց պետք է մտածել այդ ուղղությամբ, առավել ևս, որ ներկայում միջմասնագիտական մագիստրոսական ծրագրերի առաջադրումը չափազանց կարևորվում է ռեկտորատի կողմից: Կարևոր է նաև այլ ֆակուլտետում առկա մագիստրոսական ծրագրերի իրականացմանը մեր ֆակուլտետի մասնագետների մասնակցությունը: Հաշվետու տարում հաջողությամբ շարունակվել է համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացումը մեր ֆակուլտետի վեց ամբիոններում՝ դեղագործության հարակից թեմաների ուղղությամբ: Ուրախ ենք, որ այս երկուստեղ ձեռնառու համագործակցությունը շարունակվում է նաև ներկայում:

Հաշվետու տարում, որն ընդգրկում է 2020/21թթ ուստարվա երկրորդ կիսամյակը և 2021/22թթ ուստարվա առաջին կիսամյակը, ֆակուլտետի 10 մագիստրոսական ծրագրերից գործել են 7-ը (պատկեր 4): Բացված 7 ծրագրերից 3-ը գործում են Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում և Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում, ընդ որում մագիստրանտների թիվն առաջին կուրսում 21 է, երկրորդում՝ 39: • Եվ սա պատահական չէ, քանի որ ամբիոնը և գիտակրթական այս կենտրոնն ապահովված են թե մեծաթիվ ակտիվ գործող մասնագետներով և թե անհրաժեշտ սարքավորումներով: Այս ուսումնական տարում ֆակուլտետի 7 ամբիոններից մագիստրոսական ծրագիր չի բացվել գենետիկայի և բջջաբանության ամբիոնում /որն սնակնկալ էր մեզ համար/ և էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնում: Ցավալի է նաև կենսաֆիզիկայի ամբիոնի երկրորդ մասնագիտացման՝ կենսաինֆորմատիկայի մագիստրոսական ծրագրի արդեն չորսամյա բացակայությունը: Կարծում եմ պետք է մտածել այս չափազանց արդիական մագիստրոսական ուղղության գծով ԵՊՀ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի հետ համատեղ ծրագիր ներկայացնելու ուղղությամբ:

Հարգելի գործընկերներ, բոլորիս պարզ է, որ բարձրագույն կրթության պատշաճ որակի ապահովման գործում շատ կարևոր է արդի ուսումնաստեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, բարձրորակ ռեակտիվների

առկայությունը: Պատկերում, հիշեցման կարգով, բերվում է ֆակուլտետում դրանց ձեռքբերման հիմնական չորս աղբյուրները՝ ԵՊՀ-ից ֆակուլտետին հասկացվող փոքրածավալ գումարը (տարեկան 1.650.000 դրամ, որի մեջ մտնում են գրասենյակային ծախսերը, գործուղման, ծառայությունների ձեռքբերման և այլ ծախսերը), ԿԳՄՄՆ ԳԿ-ից բազային ֆինանսավորում ստացող Կենսաբանության գ/հ ինստիտուտի 9 գիտական լաբորատորիաների ֆինանսները, թեմատիկ ֆինանսավորման նախագծերի և այլ միջպետական (հայ-ռուսական, հայ-բելոռուսական և այլ նախագծերի) ֆինանսները և, վերջապես, միջազգային դրամաշնորհներից ստացվող գումարները (պատկեր 5):

Հաջող պատկերում (պատկեր 6) բերված է բազային, թեմատիկ և միջազգային ֆինանսավորմամբ ամբիոններում իրականացվող թեմաների քանակը: Ընդգծված առաջատարը, այստեղ նույնպես, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է, որտեղ իրականացվում է ֆակուլտետում կատարվող 60 ֆինանսավորվող թեմաներից 25 տարաբնույթ ֆինանսավորմամբ թեմաներ: Տարեցտարի բարելավվում է վիճակը Կենդանաբանության ամբիոնում /18 թեմա/: Մյուս ամբիոններում ֆինանսավորվող թեմաների քանակը մեկ տասնյակից քիչ է: Ողջունելի է, որ յոթ ամբիոններից չորսում առկա են նշված երեք տիպի ֆինանսավորմամբ թեմաներ կամ ծրագրեր: Իհարկե, նշված թեմաները /ծրագրերը/ շատ տարաբնույթ են և միշտ չէ, որ դրանց մեծ թիվը պայմանավորում է նաև մեծ ֆինանսավորում: Հաջորդ պատկերում (պատկեր 7) տեսնում ենք ամբիոնների ստացվող ֆինանսավորման արժեքները: Նախ նշեմ, որ այս աղբյուրներից ֆակուլտետում ստացվող ընդհանուր գումարը հաշվետու տարում նույնպես քիչ չէ՝ մոտ 212 մլն դրամ, ինչը փոքր-ինչ ավելի է քան նախորդ տարի /մոտ 205 մլն դրամ/ և զգալի ավելի, քան 2019 թվականին /169,4 մլն դրամ/, այսինքն, ունենք առաջընթաց: Այս առումով առաջատարներն են Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնը /83,3 մլն դրամ/, Էկոլոգիայի և բնության սփառմանության ամբիոնը /47,0 մլն դրամ/, Կենդանաբանության ամբիոնը /34,5 մլն դրամ/ և Գենետիկայի և բջջաբանության ամբիոնը /30,9 մլն դրամ/: Ցավոք, նման ֆինանսավորում ընդհանրապես չի ստացել Մ/կ ֆիզիոլոգիայի ամբիոնը, հուսով ենք և ակնկալում ենք հաջորդ տարի դրական տեղաշարժ:

Խոսել ֆակուլտետի ուսումնական տարածքների քանակի ու վիճակի մասին այս հաշվետու տարում նույնպես նպատակահարմար չեմ համարում, քանի որ ուսման պրոցեսի մի մասը իրականացվել է հիմնականում հեռավար, իսկ տարածքների քանակն էլ միշտ բավարար է եղել: Հաշվետու տարում ֆակուլտետի մասնաշենքում իրականացվել են որոշ ոչ կապիտալ վերանորոգումներ, հատկապես

մասնաշենքի վերջին հարկում: Նման որոշ տարածքների անհրաժեշտ վերանորոգումներից բացի անհրաժեշտ է նշել նաև մասնաշենքի առաջին հարկում, մուտքին առնթեր, տարիներ շարունակ գրեթե անգործության մատնված նախկին բուֆետի տարածքի վերանորոգումը, որն իր վերջնական տեսքը ստացավ հաշվետու տարում: Վերանորոգումն իրականացվել է ԿԳՄՍ նախարարության հանձնարարությամբ և ֆինանսավորմամբ՝ 2022 թվականին Հայաստանում կայանալիք կենսաբանության միջազգային օլիմպիադայի հանձնախմբի աշխատանքների իրականացման համար:

Հաշվետու տարում, տարբեր պրակտիկաների իրականացումը ֆակուլտետի ամբիոններում, հիմնականում, կատարվել է բնականոն հունով, որոշ դեպքերում /COVID-19-ի պատճառով/ նաև հեռավար: Ուրախությամբ պետք է նշել, որ հաշվետու տարում առաջինկուրսեցիների դաշտային ուսումնական պրակտիկան հաջողությամբ անցկացվեց Ծաղկաձորի համալսարանական հանգրվանում և անցավ նույնպես բնականոն հունով: Միաժամանակ պարզ է, որ գիտակրթական գործընթացներում ստեղծված արտակարգ իրավիճակը չէր կարող բացասաբար չազդել ջերմոցի կամ կենդանիների բուծարանի աշխատանքի վրա. բնական է, որ հաշվետու տարում դրանք թերի են օգտագործվել:

### 3. Գիտական աշխատանքներ

Հարգելի գործընկերներ. Գիտեք, որ վերջին տասնամյակի ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանանում հատկապես միջազգային և հանրապետական գիտական պարբերականներում հրատարակումների մեծաթիվ քանակի, ինչպես նաև որակի առումով: Տարեկան հրատարակումների ընդհանուր թվաքանակով ֆակուլտետը համալսարանի մաթեմատիկական և բնագիտական ոլորտի ֆակուլտետների մեջ առաջատարն է, ինչը նշեց նաև համալսարանի ռեկտորի պաշտոնակատար պարոն Հովհաննես Հովհաննիսյանը վերջերս ֆակուլտետի գիտխորհրդի հետ հանդիպման ժամանակ: Իհարկե, վերջին երկու տարիների «սպեցիֆիկան» չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենար նաև այս առումով: Հաշվետու տարում հրատարակումների ընդհանուր թվաքանակը /179/ մոտ է անցյալ տարվա համապատասխան ցուցանիշին /170/, սակայն զգալիորեն հետընթաց է արձանագրում նախորդ տարիների (և հատկապես 2019 թվականի) ցուցանիշներից /297, 248, 230/ (պատկեր 8): Նախորդ տարիների հետ համեմատած էապես նվազել է գիտաժողովների թեզիսների թվաքանակը, թեև անցյալ տարվա ցուցանիշից ունենք որոշակի աճ: Բնական է, որ հոդվածների թվաքանակի նվազման հետ մեկտեղ նվազել է նաև Հայաստանից դուրս հրատարակված հոդվածների

թվաքանակը /անցյալ տարվա 70-ի դիմաց՝ 57/: Եվ եթե նկատի ունենանք, որ հողվածների մեծ մասը նախորդ տարվա /կամ նույնիսկ տարիների/ ընթացքում կատարված փորձարարական աշխատանքների արդյունք են, ապա հեռանկարը լավատեսություն չի ներշնչում:

Հաջորդ պատկերում տեսնում ենք տարբեր ամբիոնների ներդրումը (պատկեր 9): Այստեղ նույնպես ընդգծված առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է՝ 61 հրատարակում /այդ թվում՝ 21 հողված, գիտաժողովների 35 թեզիս, 1 ուսումնական ձեռնարկ և մենագրություններում հրատարակված 4 գլուխներ/: Երկրորդ տեղում է կենդանաբանության ամբիոնը, որը հողվածների թվով /և նույնիսկ Հայաստանից դուրս հրատարակվածների քանակով գերազանցում է բոլորին՝ 22(21)/: Սա շատ ուրախալի է և վկայում է ամբիոնում գիտական աշխատանքների պատշաճ մակարդակի մասին: Մնացած ամբիոնների հրատարակումների թվաքանակը քիչ է տարբերվում անցյալ տարվա ցուցանիշներից: Քանակը՝ քանակ, բայց նշենք, որ հողվածների գիտական մակարդակի որոշիչը հրատարակումն է միջազգային հեղինակավոր ամսագրերում: Այս առումով հարկ է նշել, որ վիճակը վատ չէ, եթե նկատի ունենանք, որ հաշվետու տարում, ինչպես և 2020 թվականին, հողվածների 1/3-ից կեսը հենց այդպիսի ամսագրերում են տպագրված:

Ամենամյա հաշվետվություններում բերվում էր նաև աշխատակիցների և ուսանողների կարճաժամկետ /մինչև մեկ ամիս/ և երկարաժամկետ տարաբնույթ գործուղումների մասին տեղեկատվությունը: Բնական է, որ գործուղումների քանակը հաշվետու տարում /ինչպես և 2020 թվականին / պետք է էապես քիչ լիներ մինչև կովիդյան տարիների հետ համեմատած: 2019 թվականին գործուղումների թիվը 89 էր, 2020-ին՝ 13, իսկ հաշվետու տարում՝ 14, որոնցից 13-ը՝ երկարաժամկետ /մեկ ամսից ավելի/ և միայն 1-ը՝ կարճատաժամկետ, ընդ որում ֆակուլտետի 7 ամբիոններից միայն 4-ից են գործուղվել աշխատակիցներ կամ ուսանողներ: Երկարաժամկետ գործուղումների մեծ մասը հասու է ուսանողներին և երիտասարդ մասնագետներին: Քանի որ կարճաժամկետ գործուղումների մեծ մասի նպատակը գիտաժողովներին մասնակցությունն է, ինչը հաշվետու տարում հնարավոր չէր հասկանալի պատճառներով, պարզ է դառնում դրանց փոքր թիվը:

Հասկանալի է, որ հաշվետու տարում խոսել միջազգային սերտ համագործակցության, արտասահմանյան գիտնականների մեծաթիվ այցելությունների, ֆակուլտետում գիտաժողովների կազմակերպման և գիտակրթական գործընթացները խթանող այլ միջոցառումների մասին իրատեսական չէ: Թեև եղել են որոշ այցելություններ, մասնավորապես, կենդանաբանության



ամբիոն: Ֆակուլտետի գործունեության այլ բնագավառների մասին ևս էական ոչինչ չկա տեղեկացնելու: Գիտական խորհրդի /գիտքարտուղար՝ Իրեն Շահազիզյան/, Արհբյուրոյի /նախագահ՝ Սեդա Մարության գործունեությունը իրականացվել է համահունչ ստեղծված իրավիճակին: Նույնը վերաբերում է նաև ֆակուլտետի ուսխորհրդին և ուսանողական գիտական ընկերությանը:

Ի մի բերելով, հաշվետու տարում արձանագրված հաջողությունները, կարծում եմ արժե նշել նաև մեր որոշ մասնագետների միջազգային, հանրապետական համալսարանական պարգևներին արժանանլու փաստը: Այսպես, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի մասնագետներն արժանացել են երեք 1-ին տեղերի մրցանակների՝ «Green AgriTech Startup Clash 2021», «Social Impact Award Armenia» և «UNDP Impact Aim Climate Change Tech Accelerator» միջազգային մրցույթներում, ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտկոմի «Արդյունավետ գիտաշխատող» կոչմանն են արժանացել ֆակուլտետի 12 մասնագետներ, որոնցից կեսը՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնից /Կարեն Թոշունյան, Աննա Փոլադյան, Լիլիթ Գաբրիելյան, Հովիկ Փանոսյան, Սաթենիկ Միրզոյան, Լիլիթ Հակոբյան/, երկուական մասնագետներ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնից /Ռուբեն Հարությունյան, Տիգրան Հարությունյան/, Էկոլոգիայի և բջջաբանության ամբիոնից /Կարեն Ղազարյան, Հասմիկ Մովսիսյան/ և Կենդանաբանության ամբիոնից /Մարինե Առաքելյան, Սարգիս Աղայան/: Նշեմ նաև Սարգիս Աղայանի նախորդ տարվա հաջողությունը՝ ՀՀ Նախագահի մրցանակը /ինչը, ցավոք անցյալ տարի չենք նշել/: Հաշվետու տարում Կենսաֆիզիկայի ամբիոնի գիտաշխատող Գայանե Ղուկասյանն արժանացել է «ՀՀ վաստակավոր մանկավարժի» պատվավոր կոչմանն, իսկ Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ Աննա Կարապետյանը՝ «ԵՊՀ դասավանդման գերազանցության» մրցանակի:

Շնորհավորելով մեր մասնագետներին ուզում եմ հույս հայտնել, որ ապագայում ևս նրանք /և ոչ միայն նրանք/ կարձանագրեն լուրջ հաջողություններ:

Դրա համար առկա են բոլոր նախադրյալները: Նախադրյալները շատ են: Դրանց թվում՝ Գիտության կոմիտեի բոլորովին վերջերս հրապարակված մրցույթների արդյունքներն են. ֆակուլտետի 7 ամբիոններից 6-ի մասնագետները շահել են 5 նախագիծ «Առաջատար հետազոտությունների աջակցության» 5 տարի ժամկետ ունեցող մրցույթում և 10 նախագիծ՝ 3 տարի ժամկետ ունեցող «Թեմատիկ ֆինանսավորմամբ» նախագծերի մրցույթում (պատկեր 10):

Այսբանը՝ շնորհակալություն ուշադրության համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը, ով հիշատակեց, որ այսօր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, Հայ-ռուսական Սլավոնական համալսարանի բժշկական կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր Արմեն Թոչունյանի մահվան տարելիցն է: Հ. Հովհաննիսյանը նշեց, որ մայր բուհը, ի դեմս Արմեն Թոչունյանի, կորցրել է ականավոր գիտնականի: Կարևորեց նշանավոր գիտնականի մեծ ավանդը, ինչն իր առանձնահատուկ տեղն ուներ ինչպես մայր բուհի և հայաստանյան գիտության համակարգում, այնպես էլ միջազգային ասպարեզում:

Հ. Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց դեկանի կողմից ընտրված տարեկան հաշվետվության օրինակելի ձևաչափի համար, որը ներառում էր փաստերի, թվերի, աղյուսակների, գծապատկերների ներկայացում, ինչը պատկերավոր և հասկանալի է դարձնում մատուցված տեղեկատվությունը: Կարևոր էր նաև այն, որ նշվում էին ինչպես առավելությունները, այնպես էլ քննադատաբար թերությունները, այսինքն դեկանի կողմից տրվում էր անաչառ գնահատական ֆակուլտետի գործունեության վերաբերյալ:

Հ. Հովհաննիսյանը նշեց, որ կենսաբանության ֆակուլտետը տարիներ շարունակ հանդես է եկել բազմաթիվ հրատարակումներով, մասնավորապես ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում, ինչը շարունակվում է մինչ այսօր: Նշվեց նաև ֆակուլտետի ներգրավվածությունը ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի և մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթներին, ինչը շատ կարևոր է և խրախուսելի:

• Հաշվի առնելով ֆակուլտետի գիտական ներուժը, Հ. Հովհաննիսյանն առաջարկեց ընդլայնել տարբեր բնույթի համատեղ գիտահետազոտական կենտրոնների ստեղծման գործընթացը, որոնք կկատարեն հիմնարար հետազոտություններ և ուղղված կլինեն ինչպես գիտական, այնպես էլ կիրառական և արտադրական առաջընթացին: Օրինակ, ստեղծելով էկոլոգիական հետազոտությունների համատեղ կենտրոն, կարելի է իրականացնել բնապահպանական ռիսկերի վերլուծություն և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, ինչը շատ կարևոր է և արդիական:

Հ. Հովհաննիսյանը ներկաներին տեղեկացրեց նաև այն մասին, որ ներքին ֆինանսավորմամբ ԵՊՀ-ի կողմից տրամադրվելու են դրամաշնորհներ 5 ուղղություններով: Քննարկվեցին ԵՊՀ-ում ուսումնական դասընթացների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ հարցեր, մասնավորապես e-learning

հարթակում դասընթացների դասապլանների և շաբաթական նյութերի տեղադրման անհրաժեշտության մասին:

Քննարկվեց նաև Հայաստանում COVID-19-ով պայմանավորված համաճարակային լարված իրավիճակը և Հ. Հովհաննիսյանի կողմից ներկայացվեցին ԵՊՀ-ի աշխատակիցների պատվաստվածության ցուցանիշները:

Ամփոփելով ելույթը, ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը դրական գնահատեց դեկանի կատարած աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Քննարկվեցին մի շարք ընթացիկ հարցեր նվիրված մանկավարժական և գիտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի կողմից առաջարկված «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի հայտի քննարկման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ներկայացված «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի հայտը:

ԼՍԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կողմից ներկայացրած Հ.Խ. Գևորգյանի, Կ.Ա. Թոչունյանի «Fermentation» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը, որը մշակվել է ԵՊՀ-ի էրազմուս+ ABioNet “Armenian Network of Excellence in Bio-products Science and Technology” ծրագրի շրջանակներում և համակարգվել Նելլի Հովհաննիսյանի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել Հ.Խ. Գևորգյանի, Կ.Ա. Թոչունյանի «Fermentation» ուսումնական ձեռնարկը հրատարակման:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ



Է.Ս. Գևորգյան

Ի.Վ. Շահազիզյան